ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«04» փետրվար 2025 թ. N 12-Ա/Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի հունվարի 16-ի N 36-Ա որոշումով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2009 թվականի հունվարի 19-ի N 5-Ա/1 հրամանը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ Նախարարության գլխավոր քարտուղարի մոտ սոցիալական պաշտպանության ոլորտի առանձին բնագավառները համակարգող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալների և այդ բնագավառների պատասխանատուների մասնակցությամբ, ոլորտում, այդ թվում՝ ոլորտում ԲԳԿ չհանդիսացող պետական մարմինների կողմից, իրականացվող ծրագրերի գծով ՀՀ 2026-2028 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ ՄԺԾԾ) հայտերի ծախսային նախնական չափաքանակների վերաբերյալ առաջարկությունների ներկայացման և քննարկման ժամանակացույցը հավելվածի:

2. Աշխատանքի և զբաղվածության, ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների, հավասար հնարավորությունների ապահովման, կենսաթոշակային ապահովության և այլ դրամական վճարների, ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչությունների պետերին՝ ՀՀ 2026-2028 թվականների ՄԺԾԾ հայտերի մշակման շրջանակներում Ձեր իրավասության ներքո գտնվող բնագավառի բյուջետային ծրագրերը բխեցնել ոլորտային ռազմավարության նպատակներից ու սահմանված թիրախներից՝ հաշվի առնելով ռազմավարությամբ նախատեսված ֆինանսական շրջանակը:

3. Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության պետին՝

1) ոլորտի առանձին բնագավառների պատասխանատուներին մշտապես տրամադրել մեթոդական աջակցություն՝ համապատասխան ձևաչափերը լրացնելու համար և կատարել պահանջվող ֆինանսական հաշվարկները,

2) ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչությանը տրամադրել.

ա. մինչև 2025 թվականի փետրվարի 26-ը՝ ՀՀ 2026-2028 թվականների ՄԺԾԾ և ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման՝ ՀՀ պետական մարմինների հայտերը կազմելու և դրանք ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելու մեթոդական ցուցումներով (այսուհետ՝ Մեթոդական ցուցումներ) պահանջվող ֆինանսական հաշվարկներ պարունակող հավելվածները գոյություն ունեցող միջոցառումների (բազային բյուջե) մասով՝ Ժամանակացույցի 13-րդ կետի 1-ին ենթակետի կատարումն ապահովելու համար,

բ. մինչև 2025 թվականի մարտի 5-ը՝ ՀՀ 2026-2028 թվականների ՄԺԾԾ և ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման Մեթոդական ցուցումներով պահանջվող ֆինանսական հաշվարկներ պարունակող հավելվածները ընդլայնումների և նոր նախաձեռնությունների մասով՝ Ժամանակացույցի 13-րդ կետի 2-րդ ենթակետի կատարումն ապահովելու համար,

գ. ՄԺԾԾ հայտերի շուրջ ՀՀ վարչապետի մոտ Ժամանակացույցի 22-րդ կետով նախատեսված քննարկման արդյունքներով երկօրյա ժամկետում՝ ավարտուն տեսքի բերված ՄԺԾԾ հայտերի Մեթոդական ցուցումներով պահանջվող ֆինանսական հաշվարկներ պարունակող հավելվածները՝ Ժամանակացույցի 23-րդ կետի կատարումն ապահովելու համար,

դ. մինչև 2025 թվականի հունիսի 27-ը (հիմք ընդունելով Ֆինանսների նախարարության 29.01.2025 N 01/8-5/814-2025 գրությամբ սահմանած ժամկետը)՝ 2026 թվականի բյուջետային հայտի, ներառյալ 2027-2028 թվականների թարմացված հայտերի Մեթոդական ցուցումներով պահանջվող ֆինանսական հաշվարկներ պարունակող հավելվածները՝ Ժամանակացույցի 31-րդ կետի կատարումն ապահովելու համար:

4. Միասնական սոցիալական ծառայության պետին, կառուցվածքային պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարներին, «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի և «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեններին՝ համապատասխան բնագավառը համակարգող Նախարարի տեղակալի հետ համաձայնեցնելուց հետո՝

1) մինչև 2025 թվականի փետրվարի 14-ը՝ Նախարարության գլխավոր քարտուղարին, ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչություն, ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել ՀՀ 2026-2028 թվականների ՄԺԾԾ հայտերի նախագծերի մշակման աշխատանքների շրջանակներում Ձեր իրավասության ներքո գտնվող բյուջետային ծրագրերի գծով կատարվելիք ծախսերի (ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրած 2026 թվականի ծախսային նախնական կողմնորոշիչ չափաքանակների հիման վրա) նախնական չափաքանակները՝ սույն հրամանի հավելվածով սահմանված ժամկետներում՝ Նախարարության գլխավոր քարտուղարի մոտ քննարկումներ անցկացնելու նպատակով.

2) ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչություն ներկայացնել.

ա. մինչև 2025 թվականի փետրվարի 26-ը՝ Ձեր բնագավառը համակարգող Նախարարի տեղակալի, ինչպես նաև ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության հետ համաձայնեցված, Մեթոդական ցուցումներին համապատասխան կազմած ՀՀ 2026-2028 թվականների ՄԺԾԾ հայտերը գոյություն ունեցող միջոցառումների (բազային բյուջե) մասով՝ Ժամանակացույցի 13-րդ կետի 1-ին ենթակետի կատարումն ապահովելու համար,

բ. մինչև 2025 թվականի մարտի 5-ը՝ Ձեր բնագավառը համակարգող Նախարարի տեղակալի, ինչպես նաև ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության հետ համաձայնեցված, Մեթոդական ցուցումներին համապատասխան կազմած ՀՀ 2026-2028 թվականների ՄԺԾԾ հայտերը ընդլայնումների և նոր նախաձեռնությունների մասով՝ Ժամանակացույցի 13-րդ կետի 2-րդ ենթակետի կատարումն ապահովելու համար,

գ. ՀՀ վարչապետի մոտ Ժամանակացույցի 22-րդ կետով նախատեսված քննարկման արդյունքներով մեկօրյա ժամկետում՝ ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության հետ համաձայնեցված, Մեթոդական ցուցումներին համապատասխան կազմած ավարտուն տեսքի բերված ՀՀ 2026-2028 թվականների ՄԺԾԾ հայտերը (ներառյալ տարածքային կտրվածքով՝ առանձնացված ըստ Երևան քաղաքի և առանձին մարզերի)՝ Ժամանակացույցի 23-րդ կետի կատարումն ապահովելու համար,

դ. մինչև 2025 թվականի հունիսի 26-ը (հիմք ընդունելով Ֆինանսների նախարարության 29.01.2025 N 01/8-5/814-2025 գրությամբ սահմանած ժամկետը)՝ ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության հետ համաձայնեցված, 2026 թվականի բյուջետային հայտը՝ ներառյալ 2027-2028 թվականների թարմացված հայտերը, 2026 թվականի ծախսերի այլընտրանքային սցենարները, ինչպես նաև բյուջետային ծրագրերի նկարագրերը (անձնագրերը)՝ Ժամանակացույցի 31-րդ կետի կատարումն ապահովելու համար,

ե. «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվելուց հետո մեկօրյա ժամկետում՝ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեով հաստատված հատկացումների եռամսյակային բաշխվածությունը՝ համապատասխան հավելվածներով՝ ՀՀ վարչապետի 2025 թվականի հունվարի 16-ի N 36-Ա որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության կատարումն ապահովելու համար,

զ. «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվելուց հետո՝ յոթօրյա ժամկետում 2026 թվականի «Քաղաքացու Բյուջե»-ն սահմանված ձևաչափով՝ Ժամանակացույցի 53-րդ կետի կատարումն ապահովելու համար:

5. Կառուցվածքային պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարներին՝ ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչություն ներկայացնել.

1) մինչև 2025 թվականի ապրիլի 8-ը՝ ՀՀ 2026-2028 թվականների ՄԺԾԾ նախագծի մշակման աշխատանքների շրջանակներում Ձեր իրավասության ներքո գտնվող ոլորտներում շահագրգիռ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ բյուջետային հայտերի շուրջ անցկացված քննարկումների (այդ թվում՝ առցանց ձևաչափով) արդյունքներով կազմած ամփոփաթերթը՝ Ժամանակացույցի 20-րդ կետի կատարումն ապահովելու համար.

2) մինչև 2025 թվականի օգոստոսի 28-ը՝ ՀՀ կառավարության 2026 թվականի պետական բյուջեի ուղերձի մասը կազմող՝ 2026 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին ՀՀ կառավարության զեկույցի «Սոցիալական պաշտպանություն» հատվածների նախագծի, ինչպես նաև հաստատված ՄԺԾԾ-ի 2027-2028 թվականների համար թարմացված Ձեր բնագավառի հատվածը՝ համաձայնեցված համապատասխան բնագավառը համակարգող Նախարարի տեղակալի հետ՝ Ժամանակացույցի 35-րդ կետի կատարումն ապահովելու համար:

6. Աշխատանքի և զբաղվածության վարչության պետին՝ ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչություն ներկայացնել.

1) մինչև 2025 թվականի փետրվարի 27-ը՝ ՄԺԾԾ նախագծի հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման նպատակով՝ սոցիալական

պաշտպանության ոլորտի հիմնական ցուցանիշների վերաբերյալ կանխատեսումները՝ Ժամանակացույցի 12-րդ կետի կատարումն ապահովելու համար.

2) մինչև 2025 թվականի օգոստոսի 6-ը սոցիալական պաշտպանության հիմնական ցուցանիշների վերաբերյալ 2026 թվականի և հաստատված ՄԺԾԾ-ի՝ 2027-2028 թվականների թարմացված կանխատեսումները՝ Ժամանակացույցի 32-րդ կետի կատարումն ապահովելու համար:

7. Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝ Նախարարության ինտերնետային կայքում տեղադրել.

1) մինչև 2025 թվականի մարտի 10-ը՝ ի կատարումն Ժամանակացույցի 13-րդ կետի ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված 2026-2028 թթ. ՄԺԾԾ հայտը և ըստ անհրաժեշտության այլ պարզաբանող նյութերը՝ Ժամանակացույցի 15-րդ կետի կատարումն ապահովելու համար.

2) մինչև 2025 թվականի ապրիլի 10-ը՝ ՀՀ 2026-2028 թվականների ՄԺԾԾ նախագծի մշակման աշխատանքների շրջանակներում շահագրգիռ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ բյուջետային հայտերի շուրջ անցկացված քննարկումների արդյունքների վերաբերյալ ամփոփաթերթը՝ Ժամանակացույցի 20-րդ կետի կատարումն ապահովելու համար.

3) մինչև 2025 թվականի հունիսի 5-ը՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ 2026-2028 թվականների ՄԺԾԾ հիմքում դրված ծախսային հաշվարկ-հիմնավորումները և ըստ անհրաժեշտության այլ պարզաբանող նյութերը՝ Ժամանակացույցի 28-րդ կետի կատարումն ապահովելու համար:

8. Գնումների համակարգման բաժնի պետին՝ «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվելուց հետո եռօրյա ժամկետում ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչություն ներկայացնել 2026 թվականի ընթացքում բյուջետային հատկացումների հաշվին պետության կարիքների համար իրականացվելիք գնումների պլանը՝ ՀՀ վարչապետի 2025 թվականի հունվարի 16-ի N 36-Ա որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության կատարումն ապահովելու համար:

9. Տնտեսական հարցերի բաժնի պետին (աշխատանքային խումբ)՝ ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչություն ներկայացնել «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվելուց հետո ՀՀ 2026 թվականին շինարարական աշխատանքների գծով ծախսերի համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննության դրական եզրակացություն ստացած նախագծանախահաշվային փաստաթղթերը, ներառյալ փորձաքննության դրական եզրակացությունը՝ ՀՀ վարչապետի 2025 թվականի հունվարի 16-ի N 36-Ա որոշման 3-րդ կետի 4-րդ ենթակետի կատարումն ապահովելու համար:

10. Միասնական սոցիալական ծառայության պետին՝ համապատասխան բնագավառը համակարգող Նախարարի տեղակալի հետ համաձայնեցնելուց հետո համապատասխան պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանում ներկայացնել.

1) մինչև 2025 թվականի փետրվարի 24-ը՝ Մեթոդական ցուցումներին համապատասխան կազմած ՀՀ 2026-2028 թվականների ՄԺԾԾ հայտերը գոյություն ունեցող միջոցառումների (բազային բյուջե) մասով՝ Ժամանակացույցի 13-րդ կետի 1-ին մասի կատարումն ապահովելու համար.

2) մինչև 2025 թվականի մարտի 3-ը՝ Մեթոդական ցուցումներին համապատասխան կազմած ՀՀ 2026-2028 թվականների ՄԺԾԾ հայտերը ընդլայնումների և նոր նախաձեռնությունների մասով՝ Ժամանակացույցի 13-րդ կետի 2-րդ մասի կատարումն ապահովելու համար.

3) ՄԺԾԾ հայտերի շուրջ ՀՀ վարչապետի մոտ Ժամանակացույցի 22-րդ կետով նախատեսված քննարկման արդյունքներով մեկօրյա ժամկետում՝ ավարտուն տեսքի բերված ՄԺԾԾ հայտերը՝ Ժամանակացույցի 23-րդ կետի կատարումն ապահովելու համար.

4) մինչև 2025 թվականի հունիսի 24-ը (հիմք ընդունելով Ֆինանսների նախարարության 29.01.2025 N 01/8-5/814-2025 գրությամբ սահմանած ժամկետը)՝ 2026 թվականի բյուջետային հայտը՝ ներառյալ 2027-2028 թվականների թարմացված հայտերը, 2026 թվականի ծախսերի այլընտրանքային սցենարները՝ Ժամանակացույցի 31-րդ կետի կատարումն ապահովելու համար:

11. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղարին:

2/4/2025

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2025 թվականի ....-ի N 12-4/1 հրամանի
փետրվարի 4

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղարի մոտ՝ սոցիալական պաշտպանության ոլորտի առանձին բնագավառները համակարգող Նախարարի տեղակալների և այդ բնագավառների պատասխանատուների մասնակցությամբ, ոլորտում, ինչպես նաև ոլորտում ԲԳԿ չհանդիսացող պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող ծրագրերի գծով ՀՀ 2026-2028 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի հայտերի ծախսային նախնական չափաքանակների վերաբերյալ առաջարկությունների ներկայացման և քննարկման*

Հ/Հ	Քննարկման մասնակիցներ	Քննարկման	
		ամսաթիվ	ժամ
1.	• Հավասար հնարավորությունների ապահովման վարչության երեխաների հիմնահարցերի բաժին	13.02.2025	10 00
2.	• Հավասար հնարավորությունների ապահովման վարչության մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժին	13.02.2025	10 45
3.	• Հավասար հնարավորությունների ապահովման վարչության տարեցների հիմնահարցերի բաժին • ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	14.02.2025	11 30
4.	• Հավասար հնարավորությունների ապահովման վարչության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժին	14.02.2025	12 15
5.	• Կենսաթոշակային ապահովության և այլ դրամական վճարների վարչություն • Միասնական սոցիալական ծառայություն • Պետական եկամուտների կոմիտե • ՀՀ ֆինանսների նախարարություն	17.02.2025	14 15
6.	• Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին	17.02.2025	15 00
7.	• Աշխատանքի և զբաղվածության վարչություն • Միասնական սոցիալական ծառայություն	18.02.2025	10 00
8.	• «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ	18.02.2025	11 00
9.	• Ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչություն • ՀՀ պաշտպանության նախարարություն	19.02.2025	10 00

	• ՀՀ քաղաքաշինության կոմիտե		
10.	• «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ	19.02.2025	11 00

*Քննարկումներին պարտադիր ներգրավվում են ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչության, ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության ներկայացուցիչներ: